

**4.3.2. Ներքին զբոսաշրջություն**

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2015թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխված զբոսաշրջիկների թվաքանակը կազմել է 781 714 մարդ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2014թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ նվազել է 0.4%-ով:

**Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի**

|   | 2014թ.<br>հունվար-<br>սեպտեմբեր | Տեսակարար<br>կշիռը (2014թ.<br>հունվար-<br>սեպտեմբեր,<br>%) | 2015թ.<br>հունվար-<br>սեպտեմբեր | Տեսակարար<br>կշիռը (2015թ.<br>հունվար-<br>սեպտեմբեր,<br>%) | Աճի<br>տեմպը,<br>% |
|---|---------------------------------|--|---------------------------------|--|--------------------|
| <b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b> | <b>785 180</b>                  | <b>100.0</b>   | <b>781 714</b>                  | <b>100.0</b>   | <b>99.6</b>        |
| որոնցից ըստ նպատակի՝                      |                                 |  |                                 |  |                    |
| գործնական                                 | 153 086                         | 19.5   | 137 683                         | 17.6   | 89.9               |
| հանգստի և ժամանցի                         | 507 698                         | 64.7   | 540 941                         | 69.2   | 106.5              |
| բուժման                                   | 83 514                          | 10.6   | 60 628                          | 7.8  | 72.6               |
| այլ                                       | 40 882                          | 5.2  | 42 462                          | 5.4  | 103.9              |

<sup>1</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՁՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup>Բերված տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին: